№ 77 Մայիսի 1 (13) 1881 Մայիսի 1 (13) № 77

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարարտադարձիք տիմում են ստղոկի։
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ցունաստան։ Աւազակութիւնները Թիւրքիայում։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 28 ապրիլի

Հայոց Բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը ընդհանուր ժողովից ընտրված մասնաժողովի մէջ մշակվելուց յետոյ առաջարկվեց ընդհանուր ժողովի վերջնական քննութեանը, որը և կատարվեցաւ հինգ նիստի մէջ։

Հասարակութիւնը ընտրեց հինգ հաւատարմատար անձինք՝ պ. պ. Գ. Սունդուկեանց, իշխան Ն. Ամատունի, Ս. Մէլիք-Մէհրաբեանց, բժշկապետ Մ. Շահ-Պարոնեանց և Բ. Նաւասարդեան, որոնց յանձնվեցաւ ենթարկել կանոնադրութիւնը բարձրագոյն հաստատութեան և առհասարակ հսկել գործին, մինչև կանոնադրութեան հաստատիւն ստանալը։

Պատիւ ունեմ յայտնել յարգելի հասարակութեանը, որ երեքշաբթի, ապրիլի 28-ին վերոյիշեալ հաւատարմատարները, «Հայոց Բարեգործական ընկերութեան» կանոնադրութիւնը իրենցով հանդերձ, ներկայացրին Կովկասեան Փոխարքայի Գլխաւոր Վարչութեան Կառավարիչ պարոն Ստարոսելսկուն, ենթարկելու Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասեան Փոխարքայ Մեծ Իշխանի հաստատութեանը։

Գործ ընթացքի մասին, յարգելի համապաշտօնեայքս յանձնել են ինձ լրագրութեան միջոցաւ, պարբերապէս հաղորդել մեր ազգայնոց, որ և կը ջանամ ճշտութեամբ կատարել։

Բ. Նաւասարդեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Քարվանսարայ, 23 ապրիլի

Դիմելով մեր եղբայրակիցներին և քոյրերին հաւաքեցի Վանի սովատանջների համար 29 ռուբլի 50 կոպ.։ Ուստի կը խնդրեմ հասուցանել ուր հարկն է և տպել ձեր պատուական լրագրի առաջիկայ թերթերից մէկում ներքոյ գրեալ նուիրատուների անունները։ Ղուկաս քահանայ Սիմէօնեանց 1 ր., տիկին Աննայ Սիմէօնեանց 1 ր., Վաղինակ Սիմէօնեանց 20 կ., Համազասպ Սիմէօնեանց 20 կ., Վաղարշակ Սիմէօնեանց 20 կ., Շաւարշ Սիմէօնեանց 20 կ., Անոյշ Սիմէօնեանց 20 կ., Յակոբ Ասլանեանց 1 ր., Սարիբեգ Սիմէօնեանց 1 ր., Արշակ Ցիցիկեանց 1 ր., Աղաջան Սաղաթիելեանց 1 ր., Մովսէս Սիմէօնեանց 2 ր., տիկին Եղիսաբէթ Սիմէօնեանց 3 ր., Յակոբ Էմիլեանց 50 կ., Գէորգ Ասիլբէգեանց 50 կ., տիկին Ռէհան Ասիլբէգեանց 50 կ., Ասիլբէգ Ասիլբէգեանց 50 կ., տիկին Ովսաննայ Ասիլբէգեանց 50 կ., Արշակ Պապեանց 50 կ., Յովհաննէս Յարութիւնեանց 50 կ., Գրիգոր Ղազումեանց 50 կ., Դանիէլ Ջուարեանց 1 ր., Գրիգոր Մովսէսեանց 30 կ., Սարգիս քահանայ Պօղոսեանց 30 կ., Կարապետ Պապեանց 50 կ., Յովսէփ Թումանեանց 50 կ., տիկին Ովսաննայ Թումանեանց 50 կ., Աղէքսանդր Սարգիսեանց 50 կ., տիկին Ովսաննայ Սարգսեանց 50 կ., Բագրատ Սարգսեանց 30 կ., Գրիգոր Տէր-Դաւթեանց 50 կ., Աղէքսանդր Աղասարեանց 50 կ., Յովհաննէս Աղասարեանց 50 կ., Աղէքսանդր Տէր-Պօղոսեանց 1 ր., Աղէքսանդր Մկրտումեանց 25 կ., Յակոբ Ամիրաղեանց 50 կ., Յովհաննէս Բիւլբիւլեանց 50 կ., Գաբրիէլ Տէր-Պօղոսեանց 50 կ., Մկրտիչ Ղազումեանց 50 կ., Կարապետ Յովակիմեանց 2 ր., Բաբայ Վարդանեանց 25 կ., Մոսէս Էդիլեանց 50 կ., Աստուածատուր Ղազումեանց 1 ր., Աւետիք Ոսկանեանց 20 կ., Վարդան Սարուխանեանց 40 կ.։ Դուրս գնալով փոստի ծախսը երեսուն վեց կոպ., մնաց գումարը քսան ինն ռուբլի տասն և հինգ կոպ.։

Կարապետ Յովակիմեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են որ 25-ին և 26-ին ապրիլի այդտեղ հայոց ներկայացումներ տրվեցան յօգուտ դրադարանի։ Ներկայացրին առաջին անգամ «Սամէլ» ողբերգութիւնը։ Ներկայացումն այն աստիճան աջող էր, որ շատերը քնում էին։ Առաջին ներկայացումից սիրողները վճաս արին 8 ռուբլ, իսկ երկրորդում աջողվեցաւ. վճասը ծածկել։

—

ՂԱՐԱԳԻԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են։ «Յօգուտ Վանի սովվլոց դարձեալ ժողովարարութիւն է լինում մեզ մօտ, որի գումարը արդէն 100 ռուբլից անց է. յոյս կայ որ կը հասցնենք 200 ռուբլ գումարի։ Վերջին երեք տարվայ ընթացքում Ղարաքիլիս գիւղը նուիրել է թէ Վանի սովվելոց և թէ «Միացեալ» ընկերութեանը 800 ռուբլ։»

—

ՂԱՐԱԳԻԼԻՍԻՑ երեք վերստ հեռու գտնվող Եաղուբլի գիւղում դպրոց է բացվել և վարժապետ է հրաւիրվել, որի մօտ մանուկները սովորում են գոնէ հասարակ գրել, կարդալ և հաշուել։

—

Մեզ գրում են ՀԱՄԶԱՋԻՄԱՆ գիւղից որ այդտեղի դպրոցի հոգաբարձուները զզվելով իրանց ուսուցչից, այլ ևս չէն կամենում պահել նրան, այնպէս որ դպրոցը այսօրվանից արդէն մնալու է առանց վարժապետի։ Թղթակիցը հրաւիրում է այդ հանգամանքի վրա թեմական տեսչի ուշադրութիւնը։

—

ԶՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են որ Զատիկ օրը մի հայ իր կնոջը սրով վիրաւորեց։ Ասում են այդ սպանութեան փորձի պատճառն այն էր, որ մարդը սիրեկան գտաւ իր կնոջ սենեակում։ Կինը մէջքին ծանր վէրք ստացած՝ կարողացաւ փախչել։

—

Մեզ գրում են հետեւեալը ՂՈՒԲԱՅԻՑ։ «Մեր քահանաների մէջ դարձեալ շարունակվում են անընդհատ կռիւներ։ Շատ մեր Զատիկ օրը առանց օրհնութեան մնացին. քահանաներից մինը բարկացած լինելով մեզանից չը մաս եկաւ, միւս քահանան էլ շատ քիչ տեղեր մտաւ, իսկ մի քանի տներում նրան ներս չը թողեցին։»

—

Սիբիրի Տօմսկ քաղաքից հեռագրում են «Ho-

ՖԵԼԻԵՏՕՆ

Երկար ժամանակ է ձեզ մի լուր չեմ հաղորդել, և ոչ մի բան չեմ գրել, շատ հաւանական է որ ինձ մեռած կարծեցիք—բայց, ոչ—ընդհակառակը այն աստիճան կենդանի և քաջառողջ էի, որ մեռնելու անգամ առիթ չունեցայ։ Լռութեանս պատճառը՝ նիւթերի առատութիւնն էր, չուարած էի, չը գիտէի թէ որ կողմից սկսէի, վերջապէս այս անգամ որոշեցի ֆակտուրայի նման մի բան գրել։

—

Նախ և առաջ «ըչտէ»-ների երկրից, այսինքն Պոլսից լուր առած չունիմ, շատ կարելի է որ օսմանեան հեռատես կառավարութիւնը Թիֆլիս նամակ ուղարկելն անգամ արգելած լինի մեր Մամիկոնեան Վարդան պապայի պատկերների նման։ Լրագիրները ուրախալի լուրեր հաղորդում են հայկական հարցի մասին. յունական հարցը լուծվելուց յետոյ, անմիջապէս մեր հարցը պիտի սկսեն։ Ատուած օրեր տայ լուծողին, վերջապէս կարգը մերն է, բայց վախնալու մի բան կայ. Թունիզի խնդիրը մի դուցէ արգելք լինի, և նրան էլ լուծվելուն սպասենք։ Եթէ հաստատ գիտանք թէ Թունիզից էլ վերջը ճիշդ կարգը մերն է, վնաս չունի, բայց ցաւալին այն է, որ քաղաքական հարցերը Եւրոպայի ֆաբրիկանտների պրայս-կուրանտներիցը շատ են, որ մէկին սպասելու է։ Վերջ ի վերջոյ, եթէ մի օր հայկական հարցը լուծվի, մինչև այն ժամանակ հայերը այնքան կը լուծվին, որ Դիօգենէսի լապտերով Հայաստանում հայ պըտռելու է, նրան աւետելու համար թէ, «աչքդ լոյս, ախբեր, քիւրդերը սատկեցան, մի վախնար, քէֆիդ կաց, լաճերդ անվտանգ են։»

—

Հնարագիտութեան մէջ հռչակված Ամերիկան մի նոր գիւտ է արել, չոգեշարժ մի մեքենայ է հնարել։ Մեքենան երկու բերան ունի, մինը վերևից, միւսը ներքևից։ Վերևի կողմից ողջ ողջ մտցնում են մի խոզ, կամ մի եզ, մեքենան սկսում է չարժիլ, իսկոյն տակիցը դուրս են գալիս լաւ պատրաստված կալբասներ (saucisson)։

Ո՞րքան կարօտ է հայկական հարցը այդպիսի մի մեքենայի։

—

Հայ երիտասարդութիւնը սկսեց ազգասիրական ոգով գրիչ չարժել, տաճկերէն մի առած կայ «հէր գաֆատան պիրէր սէս չըքար» որ նշանակում է, իւրաքանչիւր գլխից մի մի տեսակ ձայն է գալիս։

Մօտերումս մի ռուսահայ երիտասարդ աղաղակում էր, «պօլսեցիներին փող մի տաք, հաչիւ պահանջեցէք, Միացեալ ընկերութիւն, ինչ է նշանակում, ինչ է անում, հայերի համար երկրագործութիւն, արհեստ պէտք է, և այլն։» Բայց այդ երկրագործական ճիւղին համար արդէն աշխատող մէկը կայ, փոխանակ արդէն հիմնված և ազգից համակրված ընկերութիւնները խախտել և նուիրատուներին սառեցնել ուզելու, թող յիշեալ պարոնը՝ իր հմտութիւնը, իր ազդեցութիւնը, իր մտաւորական ոյժը արդէն պատրաստված մի ոյժի հետ միացնէ։ Ցաւալի է մեր վիճակը, որքան սակաւաթիւ են մեր գործողները, այնքան բազմաթիւ են քննադատները։

—

Տաճկաստանի քաղաքներից մէկին մէջ, մի անուանի երիտասարդ ուզեցել է բարձր ուսում և գերագոյն կրթութիւն առած մի օրիորդի վրա ամուսնանալ։ Շատ է որոնել, վերջապէս մի հատ գտել է։ Գտածը գաղղիագէտ, անգղիագէտ, իտալագէտ, գերմանագէտ, յունագէտ, վերջապէս ...գէտ ...գէտ ...գէտ մի աքանչելի օրիորդ։ Բայց այս ամէն յատկութիւնից, նաև լի բնական ընտրհօք, այսինքն չափազանց գեղեցիկ և միանգամայն հարուստ։ Ի՞նչ գիւտ—ինչ երջանկութիւն։ Բայց աւաղ։ Ամուսնութեան մեղրահամ քաղցը լուսնեակի վեց ամիսներից յետոյ, խեղճ երիտասարդը՝ մի գիշեր, գիտնական օրիորդի վաղեմի սիրականին՝ շորերի պահարանից դուրս է հանել։

—Նախանձելի չէ այդքան բան գիտցող կին ունենալը։

—

Եղբայր, ասում էր անցեալ օր, բարեկեցիկ մի պարոն իր ընկերին։

—Զը գիտեմ ինչ անեմ, սա մարդից բնաւ չեմ ախորժած, որքան հեռանում եմ նրանից, նա այնքան ինձ է մօտենում, ինչ անեմ որ ազատվեմ։

—Դա դիւրին բան է, փոխ տուր նրան մի քանի հարիւր մանէթ մէկ մ'էլ երեսը չես տեսնի։

—

Մի ողորմութիւն չնորհեցէք, ասում էր մի խեղճ ալաչկերտցի գաղթական, անկար եմ, աղքատ եմ, երեխաներ ունիմ և այլն...

—Գնա աշխատիր։

—Գործը ուր է։

—Այսքան չինութիւններ են չինվում, մշակութիւն արա։

—Ասում են, դարդակ տեղ չը կայ։

—Գնա եկած տեղդ։

—Ի՞նչովս գնամ, փող չունեմ հէ.

—Գրել կարդալ գիտես։

—Չէ, աղա,

—Եթէ տանդ նամակ գրելու լինիս, ինչ կանես։

—Ուրիշին գրել կը տամ, աղա.

—Անունդ էլ գրել չը գիտես։

—Չէ, աղա, մատս թանաքին մէջ կը թաթախեմ ու թղթի վրան կը կոխեմ։

—Եթէ այդպէս է, գնա քահանայ ձեռնադրվիր։

—

Տար Ատուած որ Հայաստանը այս տարի սով չը տեսնէր, ամեն փորը կշտացած հայուն պարտքն է օգնութեան հասնել, ինչպէս անցեալ տարի փորձով տեսանք։ Բացառութիւններ էլ շատ կային, այսինքն հացին մէջը խեղդվելով սովալների համար մի պատառ հաց չը տուող հայեր։ Այս տեսակ անգութների սառնասրտութիւնից առաջ գալիք վտանգը դիմադրելու համար մի միջոց կայ։ Եթէ Ատուած մի արասցէ, սովը սկսէ, այն ժամանակ Ամերիկայում 40 օր քաղցած մնալով չը մեռնող դոկտորին իբրև ուսուցիչ վան պէտք է ուղարկել։

—

—Պարոն, ասացէք խնդրեմ, դուք հայագէտ էք, ինձ մի հայագէտ է հարկաւոր։

—Այո՛ պարոն, ինչ տեսակ հայերէն կամենում էք, գրաբա՞ռ թէ աշխարհաբա՞ռ։

—Ո՛չ, գրաբառ չեմ ուզում, մաքուր աշխարհաբառ։

—Աշխարհաբառին ո՞ր տեսակն էք կամենում։

—Ո՞ր տեսակը ինչ է նշանակում։

—Դա նշանակում է, այսինքն ես ուզում եմ ասել թէ ո՞ր քաղաքի, կամ ժողովրդեան, ո՞ր դասակարգի, ո՞ր մասնաժողովի, ո՞ր յանձնաժողովի, կամ ո՞ր խմբագրապետի, կամ ո՞ր վիպասանի աշխարհաբառն էք ցանկանում։

—Եղբայր, ինձ չփոթեցրիք, միթէ այդքան տեսակ աշխարհաբառ լեզու կայ։

—Ի՞նչ էք կարծում, ես անհատներին չը հաշուեցի, եթէ ուզիլ հաշիւ պահանջում էք, չորս միլիոն հայ ժողովրդին իւրաքանչիւրը տարբեր լեզու է խօսում։ Այս ընթացքով մի օր հայերը բաբիլոնեան խառնակութեան նման միմեանց լեզուն չը պիտի հասկանան։

—

—Բարև բարեկամ.

—Բարև սիրելիս.

—Խնդրեմ, ինձ մի փոքր ծառայութիւն մի խնայէք. բանքից 1000 ռուբլի պէտք է վերառնեմ. ինձ համար ստորագրութիւն տալով երաշխաւոր եղէք, մի մեծ փորձանքից գլուխս պիտի ազատէք։

—Ներեցէք բարեկամ, ես էլ ձեզանից մի բան խնդրեմ, երաշխաւոր չը լինելով ես էլ իմ գլուխը մի մեծ փորձանքից ազատած կը լինիմ։

Կրռ.

вости» լրագրին, որ այդ քաղաքի սի բնակիչ Ցիբուլսկի ազգանունով նուիրեց 46,000 ռուբլ Սիբիրի համալսարանի կառուցման գործին։

—

«Русскій Курьеръ» լրագրին հեռագրում են որ Կիշինեվի մէջ կռիւ պատահեց հրէաների և քրիստոնեաների մէջ։

—

Պայրաքաղաքի լրագիրները լսել են, որ կոմս Իգնատիեվ կը նշանակվի ներքին գործերի մինիստր, իսկ կոմս Լորիս-Մէլիքով ուրիշ նշանակութիւն կը ստանայ։

—

«Голосъ» լսել է որ Կովկասեան վարչութիւնը խնդրում է կառավարութիւնից 100,000 ռուբլ նպաստ մարդիկը ոչնչացնելու համար։

—

Ապրիլի 21-ին Ս. Պետերբուրգի նահանգական դատարանը արդարացրեց Տերենտիեվ զինուորականին, որ մեղադրվում էր ռուսաղաւան կրօնից աղանդաւոր դառնալու մէջ։ Ցայտնվեցաւ որ դեռ 1847 թ-ին Տերենտիեվ ուրիշ շատ աղանդաւորների հետ միասին բանի մկրտվեցան Կազան քաղաքում։

—

Մեզ պատմում են հետեւեալը։ Հալաբարի կամուրջի առջև, Մետեխի տակ, երկու հայաստանցի աղքատ կանայք ողորմութիւն էին խնդրում։ Մի Թուրք խանութպան հայհոյեց այդ կանանց վատ խօսքերով։ Կանայք նեղացան և ինչ որ պատասխանեցին. այն ժամանակ Թուրքը այնպէս խփեց խեղճ կանանցից մէկին, որ նա գլխով պատին դիպչելով, ուշաթափ ընկաւ։ Հայ խանութպանները կանչեցին պօլիցիականին, բայց Թուրքը իսկոյն թաց կացաւ։ Հազիւ նրան կարողացան գտնել և տարան պօլիցիա։ Բայց չանցաւ մի ասս բոպէ, Թուրքին կրկին ազատեցին. նա կրկին նստեց իր խանութի առաջ և սկսեց ծաղրել հայերին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՆԱՍՏԱՆ

Բերլինից „Köln. Zeit.“ լրագրին հաղորդում են ապրիլի 23-ից։ Ամէնքից ստացված տեղեկութիւնների համեմատ յունական մինիստրութեան մէջ խաղաղութեան կողմնակիցները յաղթող հանդիսացան և այդ պատճառով յոյն-թիւրքական սահմանական հարցը կը լուծվի։ Կ. Պոլսի մէջ դեսպանները վճռել են, որ պէտք է եւրոպական մանաժողովին յանձնվի զիջած երկիրները Ցունաստանին տալը։ Իրաքանչիւր տեղը յանձնելու համար ժամանակ կորոշվի։ Այդ տեղը առաջ մանաժողովը կը գրաւի և այնուհետև կը հրաւիրի յունական զօրքերին։

„Standart“ լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ ապրիլի 22-ին Թիւրքաց կառավարութիւնը պէտք է քննէր եւրոպական պետութիւնների գրութիւնը և երկու օրից յետոյ պատասխան տար։ Կարծում են, որ յունական կառավարութիւնը ուրախ կը լինէր, եթէ Բ. Դուռը մերժէր պետութիւնների առաջարկութիւնը, որովհետև այդ դէպքում Ցունաստանը կը գրաւէր եւրոպական հասարակական կարծիքի համակրութիւնը։ Հաւանական է, որ Բ. Դուռը այդպիսի սխալ չի անի։

„Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են Ամէնքից, որ յունական մինիստրութիւնը արդէն պատրաստել է իր պատասխանը պետութիւնների երկրորդ գրութեանը, բայց նա դեռ ևս չէ յանձնված ում հարկն է։ Պատասխանի մէջ ասված է, որ յունական կառավարութիւնը ընդունում է պետութիւնների առաջարկութիւնները և ցանկանում է, որ զիջած երկիրները անյապաղ Ցունաստանին յանձնվեն և արտօնութիւններ տրվեն Թիւրքաց տիրապետութեան տակ մնացող Էպիրոսի յոյն ազգաբնակութեանը։ Ի նկատի առնելով, որ այդ հարցերի մասին դեռ բանակցութիւններ կը լինեն Կ. Պոլսի մէջ, յունական կառավարութիւնը կենտրօնացնում է իր զօրքերը սահմանների մօտ։ Այլ աղբիւրներից հաղորդում են, որ յունական մինիստրութիւնը վճռել է չը պատասխանել պետութիւնների գրութեանը մինչև տեղեկութիւն չը ստացվի այն արտօնութիւնների մասին, որոնց պէտք է ստանան Թիւրքիայի իշխանութեան տակ մնացող Էպիրոսի յոյն բնակիչները։

„Բէյտերի“ ընկերութեանը հաղորդում են, որ Ամէնքի մէջ եղած օտար պետութիւնների բոլոր ներկայացուցիչները այցելել են Կումունդուրոսին և տեղեկութիւն են տուել այն յոյների մասին, որոնք մնում են Թիւրքաց իշխանութեան տակ։ Նրանք հաւատացրին, որ այդ մարդկերանց վիճակը զբաղեցնում է պետութիւններին։ Այնուհետև Կումունդուրոս ասել է, որ նա առանձին պահանջներ չունի, միայն թէ կամենում է, որ զիջած երկիրները շուտով Ցունաստանին յանձնվեն։

„Daily News“ լրագրին հաղորդում են Ամէնքից ապրիլի 24-ից։ Ազգաբնակութիւնը գրգռված է կառավարութեան դէմ այն պատճառով, որ նա համաձայնեց ընդունել աւելի պակաս զիջումներ, քան թէ որոշել էր Բերլինի կոնֆերենցիան։ Հասարակական կարծիքը հանդստացնելու համար կառավարութիւնը լուր է տարածում, որ նրա համաձայնութիւնը վերջնական չէ և որ բանակցութիւնները կարող են պատերազմով վերջանալ, որովհետև Բ. Դուռը կարող է չընդունել Ցունաստանի վերջնական պայմանները։ Պատերազմական մինիստրը մեծ անբաւականութիւն էր նկատել զօրքերի մէջ և, երբ մինիստրների խորհուրդը չը կամեցաւ կատարել նրա պահանջները, մինիստրը ստիպված եղաւ հրաժարական տալ։ Ինչպէս երևում է Բ. Դուռն էլ բաւական չէ, որ գործը խաղաղութեամբ է վերջանում։ Թիւրքաց զօրքերը Թէսսալիայի մէջ անդադար օգնութիւն են ստանում, այնպէս որ նրանց թիւը այժմ հասնում է 44,000։

Ցունական կառավարութիւնը շարունակ պատերազմական պատրաստութիւններ է տեսնում։ Նորերումս մի քանի զրահակիր նաւեր են պատուիրած, որոնք կարճ ժամանակամիջոցի մէջ պէտք է պատրաստ լինեն։

ԱՒԱՋԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Սալոնիկի շրջականերում պատահող աւազակութիւնների մասին „Polit. Corresp.“ լրագրին գրում են։ Ապրիլի 7-ին անգլիացի Սուտերի յոյն աւազակներից յափշտակվելու մասին յայտնվեցան հետևեալ մանրամասնները։ Հրացաններով, սուիններով և սրերով զինաւորված մօտ 50 աւազակներ մտան Սուտերի տուն Իչեվօր գիւղի մէջ, որ Սալոնիկից 18 ժամվայ ճանապարհի հեռաւորութեան վրա է գտնվում և բռնեցին նրան, իր կնոջը և փոքրիկ աղջկան։ Հաբևան տան մէջ եղած վախկոտ զապտիաները չը կարողացան իր ժամանակին օգնութիւն հասցնել։ Այնուհետև աւազակները ուղևորվեցան Նիզվերից Ստագիրաս և երեք ժամ ճանապարհորդութենից յետոյ իրանց զոհերի հետ հանդստացան մի բարձրաւանդակի վրա, որտեղ նրանց հետ միացան 100—200 զինաւորված մարդիկ, որոնցից շատերը խօսում էին ոչ թէ միայն յունարէն, այլ և իտալերէն և անգլիերէն։ Այնտեղ նրանք արձակեցին Սուտերի կնոջը և երեխային այն պայմանով, որ կինը 15,000 Թիւրքաց լիրա վարձատրութիւն ուղարկի տան և հինգ օրվայ ընթացքում Սուտերին ազատելու համար։ Ողորմելի կինը իսկոյն բոլորը յայտնեց անգլիական հիւպատոսին Սալոնիկի մէջ, որ իր կողմից հեռագրեց անգլիական կառավարութեանը, բայց սա մինչև այժմ ոչինչ կարգադրութիւն չէ արել։ Յունական կառավարութիւնը իր հիւպատոսին Սալոնիկի մէջ պատուիրեց բոլոր միջոցները գործ դնել Սուտերին ազատելու համար։ Իսկապէս Սուտերի հետ պատահած անցքը միակ չէ։ Սալոնիկի շրջականերում աւազակութիւնները հետզհետէ մեծ չափերով են կատարվում։ Մի կողմից նրանք քաղաքական նպատակներով են կատարվում, միւս կողմից նրանց նպատակը դրամական հաշիւներն են։ Օրինակ ապրիլի 8-ին սուրբ Նիկոլայի գիւղում աւազակները սպանել էին մի հօր և նրա երեխային։ Գիւղը պատգամաւորներ ուղարկեց Վալիի մօտ և օգնութիւն խնդրեց, ասելով, որ հակառակ դէպքում բնակիչները ստիպված կը լինեն գաղթել։ Բացի այդ Կարաֆերիայի մէջ բնակիչները մի երեխայ յափշտակեցին և յետ ուղարկեցին հօրը չափազանց այլանդակված և վնասված, որովհետև հայրը անկարող էր եղել վճարել երեխային ազատելու համար 400 Թիւրքաց լիրա։ Շատ անգամ աւազակները ստիպում են փոքր գիւղերի բնակիչներին իրանց հետ միանալ այնու ամենայնիւ աւազակների իսկական Թիւը 300 աւելի չէ։ Նրանց գլխաւոր դարանները Օլիմպ և Գօրտիաշն են։ Ամբողջ երկիրը նրանք երկիւղի մէջ են պահում և դրա պատճառներն են վալիի Թուլութիւնը, Թիւրքաց կառավարութեան անզօրութիւնը, զօրքերի և փողի պակասութիւնը և մասամբ քաղաքական շփոթները և անկարգութիւնները։

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Ֆրանսիական զօրքերը Տունիսի մէջ առաջանում են երեք բաժիններով և դիտաւորութիւն ունեն շրջապատել կրումիրների բռնած լեռնային ամրացած դիրքը։ Երբ Ֆրանսիական նաւատորմը հասաւ Տաբարկա կղզուն, յայտնվեցաւ, որ այդ կղզին գրաւված է մի քանի հազար կրումիրներից և Տունիսի զօրքերից։ Նաւատորմի հրամանատարը իրան տուած հրահանգների համեմատ պահանջեց, որ տունիսցիները միանան Ֆրանսիացիների հետ, կրումիրների դէմ ընդհանուր պատերազմ մղելու համար, բայց Տունիսի զօրքերի հրամանատարը յայտնեց, որ նա թոյլ չի տայ Ֆրանսիացիներին ափ իջնել մինչև նրան ուժով չը ստիպեն։ Ֆրանսիական ծովապետը, ոչինչ հրահանգ չունենալով տունիսցիների այդպիսի մերժման մասին, ստիպված էր վերադառնալ Բոնա նաւահանգիստը։ Տունիսցիների հեռանալուց յետոյ Ֆրանսիացիները առանց կռիւ գրաւեցին կղզին։

Հարաւային Ալժիրիայի մէջ շարժումն է նկատվում։ Տեղական բնակիչները սպանեցին մի Ֆրանսիական օֆիցերին։ Դեռ ևս մանրամասն տեղեկութիւններ չեն ստացվել, որպէս զի կարելի լիներ դատել այդ շարժման չափերի մասին, բայց այնու ամենայնիւ Ֆրանսիական կառավարութիւնը հրամայել է շատացնել տեղական զօրքերի թիւը։

„Standart“ լրագրի թղթակիցը գրում է հետևեալը Ֆրանսիական բանակից։ Լաֆալի ճանապարհը անցնում է անապատի լեռների վրա։ Երկիրը բոլորովին մշակված չէ։ Թումբէլ-Սուկ շրջապատված է լեռներով, որոնցից երևում են Տունիսը և կրումիրների բանակը։ Կարծում են, որ կրումիրների թիւը 15,000 է հասնում։ Ֆրանսիական զօրքերի դանդաղ գործողութիւնները Տունիսի դէմ մեկնվում են նրանով, որ Ֆրանսիական կառավարութիւնը չէ կամենում անբաւականութեան առիթ տալ Իտալիային և Անգլիային, որոնք չեն համակրում Ֆրանսիայի քաղաքականութեանը Տունիսի վերաբերութեամբ։ Ֆրանսիացիների զգուշութիւնը այս դէպքում մանաւանդ իրաւացի է այն պատճառով, որ Բ. Դրան բողոքները Տունիսի բէյին պաշտպանելու համար կոչն բոլորը յայտնեց անգլիական հիւպատոսին Սալոնիկի մէջ, որ իր կողմից հեռագրեց անգլիական կառավարութեանը, բայց սա մինչև այժմ ոչինչ կարգադրութիւն չէ արել։ Յունական կառավարութիւնը իր հիւպատոսին Սալոնիկի մէջ պատուիրեց բոլոր միջոցները գործ դնել Սուտերին ազատելու համար։ Իսկապէս Սուտերի հետ պատահած անցքը միակ չէ։ Սալոնիկի շրջականերում աւազակութիւնները հետզհետէ մեծ չափերով են կատարվում։ Մի կողմից նրանք քաղաքական նպատակներով են կատարվում, միւս կողմից նրանց նպատակը դրամական հաշիւներն են։ Օրինակ ապրիլի 8-ին սուրբ Նիկոլայի գիւղում աւազակները սպանել էին մի հօր և նրա երեխային։ Գիւղը պատգամաւորներ ուղարկեց Վալիի մօտ և օգնութիւն խնդրեց, ասելով, որ հակառակ դէպքում բնակիչները ստիպված կը լինեն գաղթել։ Բացի այդ Կարաֆերիայի մէջ բնակիչները մի երեխայ յափշտակեցին և յետ ուղարկեցին հօրը չափազանց այլանդակված և վնասված, որովհետև հայրը անկարող էր եղել վճարել երեխային ազատելու համար 400 Թիւրքաց լիրա։ Շատ անգամ աւազակները ստիպում են փոքր գիւղերի բնակիչներին իրանց հետ միանալ այնու ամենայնիւ աւազակների իսկական Թիւը 300 աւելի չէ։ Նրանց գլխաւոր դարանները Օլիմպ և Գօրտիաշն են։ Ամբողջ երկիրը նրանք երկիւղի մէջ են պահում և դրա պատճառներն են վալիի Թուլութիւնը, Թիւրքաց կառավարութեան անզօրութիւնը, զօրքերի և փողի պակասութիւնը և մասամբ քաղաքական շփոթները և անկարգութիւնները։

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Ֆրանսիական զօրքերը Տունիսի մէջ առաջանում են երեք բաժիններով և դիտաւորութիւն ունեն շրջապատել կրումիրների բռնած լեռնային ամրացած դիրքը։ Երբ Ֆրանսիական նաւատորմը հասաւ Տաբարկա կղզուն, յայտնվեցաւ, որ այդ կղզին գրաւված է մի քանի հազար կրումիրներից և Տունիսի զօրքերից։ Նաւատորմի հրամանատարը իրան տուած հրահանգների համեմատ պահանջեց, որ տունիսցիները միանան Ֆրանսիացիների հետ, կրումիրների դէմ ընդհանուր պատերազմ մղելու համար, բայց Տունիսի զօրքերի հրամանատարը յայտնեց, որ նա թոյլ չի տայ Ֆրանսիացիներին ափ իջնել մինչև նրան ուժով չը ստիպեն։ Ֆրանսիական ծովապետը, ոչինչ հրահանգ չունենալով տունիսցիների այդպիսի մերժման մասին, ստիպված էր վերադառնալ Բոնա նաւահանգիստը։ Տունիսցիների հեռանալուց յետոյ Ֆրանսիացիները առանց կռիւ գրաւեցին կղզին։

Հարաւային Ալժիրիայի մէջ շարժումն է նկատվում։ Տեղական բնակիչները սպանեցին մի Ֆրանսիական օֆիցերին։ Դեռ ևս մանրամասն տեղեկութիւններ չեն ստացվել, որպէս զի կարելի լիներ դատել այդ շարժման չափերի մասին, բայց այնու ամենայնիւ Ֆրանսիական կառավարութիւնը հրամայել է շատացնել տեղական զօրքերի թիւը։

„Standart“ լրագրի թղթակիցը գրում է հետևեալը Ֆրանսիական բանակից։ Լաֆալի ճանապարհը անցնում է անապատի լեռների վրա։ Երկիրը բոլորովին մշակված չէ։ Թումբէլ-Սուկ շրջապատված է լեռներով, որոնցից երևում են Տունիսը և կրումիրների բանակը։ Կարծում են, որ կրումիրների թիւը 15,000 է հասնում։ Ֆրանսիական զօրքերի դանդաղ գործողութիւնները Տունիսի դէմ մեկնվում են նրանով, որ Ֆրանսիական կառավարութիւնը չէ կամենում անբաւականութեան առիթ տալ Իտալիային և Անգլիային, որոնք չեն համակրում Ֆրանսիայի քաղաքականութեանը Տունիսի վերաբերութեամբ։ Ֆրանսիացիների զգուշութիւնը այս դէպքում մանաւանդ իրաւացի է այն պատճառով, որ Բ. Դրան բողոքները Տունիսի բէյին պաշտպանելու համար ներշնչված են Անգլիայից և Իտալիայից։

Գամբետտայի Բելվիլի ընտրողները հրաւիրեցին նրան այդ քաղաքը, որտեղ նա մի ճառ կարտասանի և կը բացատրի իր ընտրողներին իր գործունէութեան եղանակը պատգամաւորների ժողովի մէջ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 18 ապրիլի

Ընդհատում եմ երկար լռութիւնս «Մշակի» մէջ դարձեալ նորանով, ինչով միայն պարտաւորութիւն եմ համարում զբաղվել ու զբաղեցնել այստեղի և այդ տեղի հայ հասարակութեան ուշադրութիւնը։ Կ. Պոլիս գալու օրից ի վեր ինձ յաջողվել է այնչափ տեղեկութիւններ ստանալ Թիւրքիայի ներքին քաղաքականութեան ու հասարակային կազմակերպութեան վրա, որ կարելի է նիւթ ունենալ մի ամբողջ քաղաքական տրակտատի համար, բայց այդ ամենի վրա խօսելը հէնց առաջին օրից ամենևին դուր և ապարդիւն գտնելով, նախապատիւ համարեցի խօսել միայն այն նիւթերի վրա, որոնց վերաբերմամբ ազգի մեծամասնութիւնը կարող է մի իրական բան առաջացնել հայրենիքի բարօրութեան համար, էլ առանց բերանները տարիներով բացած ու ձեռքերը ծալած Սայիդ փաշայի հետ պատրիարքի տեսակցութեան, այն ինչի հետ պ. Մ. Ջերազի խօսակցութեան և այլն այսպիսի անվերջ լուրերին նայելու։ Քաղաքական գործով թող զբաղվեն նոքա, որոնք յանձն են առել և որոնց յատուկ պարտաւորութիւն է այդ գործով պարապվելը, իսկ ամբողջ ազգը թող իր գործը կատարէ և իր կարողացածը անէ հայրենեաց կենսական պահանջների վերաբերմամբ, որով նա աւելի բան յառաջացրած կը լինի, քան թէ նաև Բերլինի 61 երրորդ յօդուածի թերատ ու հաշմանդամ իրագործութեամբ։ Ահա հէնց այսպիսի մի իրական գործ կատարելու համար Կ. Պոլսի բազմաթիւ գործիչները այնչափ սխալ ու մոլոր ընթացքի մէջ են, որ ոչ իրանք են մի բան անում և ոչ էլ մեզ մի մարդավարի բան կարողանում հասկացնել իրանց օգնելու համար։ Ընդհանրապէս պօլսեցին այնչափ սիրում է լոկ դարդակ լուրերով ու զանազան քաղաքական խնդիրներով ժամանակ անցնել, որ դուք դժուար կը գտնէք այստեղ մի տուն, մի մարդ, որը իր օրուայ երկու երրորդական մասը չը կորցնէ այս ինչ, այն ինչ փաշայի մասնաւոր կեանքի ու ընտանեկան խնդիրների պատմութիւնով։ Եթէ կուզէք ստուգել ասածս ճշմարտութիւնը, վեր առէք որը ուզէք այս տեղի հայ կամ օտար լրագիրներից. նոքա բոլորն էլ գրեթէ միայն և եթ պարապվում են լոկ լուրեր հաղորդելով, այլ ոչ թէ ստացած լուրերի վրա աղդօգուտ կամ որ և իցէ մի պիտանի մտածմունքներ անելով ու գործնական խնդիրներ տալով։ Հայաստանից այսչափ բերքեր կը բերեն այստեղ, Վանից կամ ուրիշ կողմերից այսչափ ոչխարների ու այծերի տեսակներ կը տանեն անգլիացիք Աւստրիա ու Բարեյուսոյ հրուանդանը այնտեղ նոցա տեսակները աճեցնելու ու Հայաստանի արդիւնահանութիւնը ոչնչացնելու համար, ով է այսպիսի բաների վրա ուշադրութիւն դարձնողը. ամենքն էլ պարապվում են միայն զանազան Ալիների և Վալիների պատմութիւններով ու խնդրիգաներով. ամենքն էլ միայն ամբողջ օրը պառաւային բամբասանքներ ու չաղակրատութիւններ են անում, և միմեանց ու մեզ ևս լոկ ցնցողական լուրերով կերակրում։

Նոյն պառաւային բնաւորութիւնը ու ընթացքը դուք կը տեսնէք և այն բոլոր յառաջադէմ համարված ազգայիններն մէջ, որոնց ձեռքին են ազգային ժողովը, Միացեալ ընկերութիւնը ու բոլոր ուրիշ արանց և կանանց ընկերութիւնները։ Ամենքն էլ մի բան յառաջացնելու առաջին պայմանը համարում են քուէարկելը, դիպլոմատական յօդուածները, մամլ յայտագրեր յօրինելը, զանազան դիւաններ, ատենագրութիւններ, մանաժողովներ, տնօրէն, վարչական ու ընդհանուր ժողովներ կազմելը. «մեր իմաստութիւնը», «մեր փորձառութիւնը», «մեր խոհականութիւնը» ասելը. «աշխարհ», «լոյս», «տիեզերք», «երկինք» կոչելը և այլն այսպիսի փարթամ ու դարդակ բաներ անելը։ Այս բոլորը պարզելու համար ցոյց տանք օրինակներ։

Քանի տարի է, որ այսչափ մեծաշուք տարեդարձներ է կատարում Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը, այսչափ ճոռոմաբանութիւն անում,

այսչափ քուէարկութիւններ տալիս, վիճում, բողոքում, փաստաբանում, առենագրում, օրագրի անցնում, նիստեր կազմում, «Հայաստանի լուսաւորութեան» համար ծրագրեր մշակում, նաև համալսարանի յատակագծեր շինում, բայց երբ է նա մտածել, հէնց մի փոքր ուշադրութիւն դարձրել այն իսկական պատճառները ուսումնասիրելու ու խափանելու վրա, որով իւրաքանչիւր տասը տարին Հայաստանը կորցնում է առնուազը մէկ միլլիոն հոգի զուտ հայ ազգաբնակութիւնից, և ահա ինչպէս։ Եգիպտոսից սկսած մինչև Հալեբ, Ադանա, Զմիւռնիա, Կ. Պոլիս, Ռումելիա, Բուլգարիա ու Կովկաս սփռված են միշտ երկու հարիւր հազարից մինչև երկու հարիւր յիսուն հազար հայ բեռնակիրներ, որոնք միջին հաշուով մնում են օտարութեան մէջ մօտ տասը տարի. ուրեմն միջին թիւով ևս եթէ հաշուենք, որ այդ տասը տարվայ ընթացքում իւրաքանչիւր հայուհին կորցնում է չորս կամ հինգ զաւակ, կը նշանակէ իւրաքանչիւր տասը տարուայ մէջ հայրենիքը զրկվում է մօտ մէկ միլլիոն իր հարազատ զաւակներից։ Այս սոսկալի կորուստի պատճառները խափանելու վրա երբ է մտածել Կ. Պոլսի ազգային ժողովը կամ թէ ոսոցա գործիչներից որ և է մէկը։ Փոխանակ ուշադրութեան առնելու այն պարզ իրողութիւնը թէ հայ գաղթականութեան առաջը առնելու համար հայ ժողովրդին ոչ համալսարան է հարկաւոր և ոչ որ և իցէ մի վերացական ուսում, այլ լոկ երկրագործութիւն, արհեստ ու արուեստ, որոնց վրա են հիմնված իւրաքանչիւր ազգի գոյութեան զլխաւոր պայմանները, նիւթական ու մտաւորական բարօրութիւնը, լիութիւնը, վայելուչ կեանքը ու աճումը, պօլսեցիները լոկ վերացական «լոյսի» զարգացման վրա են մտածում, որով ի դէպ ասած, իրանց սեփական մտքերը այնչափ են զարգացել, որ մի կտոր հաց չեն կարող գտնել ուտելու, ծայրէ ի ծայր անդիր իմանալով և Դանտէ, և Վիրգիլ, և Շեքսպիր և Հիւգօ։

Նոյն ընթացքը, որը ունեցել է ազգային ժողովը, ունէ և Միացեալ ընկերութիւնը և բոլոր միւս մասնաւոր ընկերութիւններն էլ. ամենն էլ մոռանալով թէ հայոց ազգի գոյութիւնը, այսչափ դարեր պահպանած կուլտուրան կայացել է վերոյիշեալ երեք ֆակտօրների՝ վաճառականութեան, արհեստի ու արուեստների մէջ, որոնցով են միայն այսչափ յառաջացել ևս Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան, Բելգիան և Զվիցերիան, չը նայելով որ նոցա արուեստաւորների նաև մէկ երրորդականը մինչև անգամ չը գիտեն ինչ բան է Դանտէ, այս ամենը մոռանալով այստեղի ընկերութիւնները և նոցա մէջ առաջաւոր համարվածները, միայն աղաղակում են զարդակ բառ. «լոյս», «ախ լոյս»։ Ցեռնելով սոցա գլխում մեր դառած այսպիսի մի idée fixe, իսկ ազգի ու ժողովրդի կենսական պահանջները անխնամ, անփոյթ, բնականաբար իմ բոլոր այժս պիտի նուիրէի միայն մտաւորական ու իրական ուղղութեան պրոպագանդային, որի յաջողութեան մասին չատ տարակուսում եմ, եթէ ռուսահայ մամուլը չը չտապէ ձայնակցել ու ձեռք կառուցել, էլ առանց սոցա մամուլի վրա յոյս դնելու։ Մինչև որ Կ. Պոլսի գործիչները երևակայական բաներով են վատնում իրանց ժամանակը ու իրանց զգացմունքը զոհացնում Եփրատից ջուր բերել տալով ու խմելով, ահա ինչ սրտաչարժ օրինակներ է ցոյց տալիս բարձի թող արած և անհոգութեան մէջ մոռացած հայ ժողովուրդը Հայաստանի խորքում։

Մեծ ու փոքր Հայաստանի սահմանագծի վրա, ընդհանուր հայկական երկրի կենտրոնում Սեբաստիայի (Սիվասի) վիլայեթում կայ մի մոռացված հայաբնակ քաղաք Գիւրիւն անունով։ Նորա մէջ բնակութիւնը, ինչպէս և բոլոր հայաբնակ քաղաքների, չը կարողանալով իրան ապրուստը հայթայթել նախնական արուեստների մնացորդներով, ստիպված է եղել չարունակ ցրվել հեռու երկիրներ բեռնակրութեան կամ ուրիշ ստոր աշխատութիւնների համար։ Այսպէսով Գիւրիւնի ժողովուրդը, մանաւանդ արական սեռը, այնչափ է սկսել սպառվել, որ տասնուերկու տարուայ ընթացքում երկու հազար հինգ հարիւր տուն զուտ հայ բնակութիւնից մնացել է միայն չորս հարիւր տուն։ Ցեռնելով այսպիսի մի ակներև կորուստ, հայ կանայք, որոնք ի վերջոյ սկսել են բոլորովին առանց արական սեռի մընալ, միահամուռ պրոշմամբ ձեռնարկել են այն արուեստների զարգացման, որոնց անկումը պատճառ է եղել իրանց եղբարց ու ամուսինների ցրվելուն։ Որովհետև Գիւրիւնի շրջակաները չատ առատ են ալնիւ բուրդ ունեցող ոչխարներով, վատնորոյ արիական հայ կանայք իրանց ուշադրութիւնը նուիրել են այդ բուրդի մշակութեան ու արդիւնահանութեան եղանակների բարւոքման։ Կամաց կամաց յառաջանալով իրանց ձեռնարկած գործի մէջ, գիւրիւնցի հայուհիք հասել են վերջապէս այն տեխնիկական զարգացման ու կատարելագործման, որ մի քանի ամիս առաջ մի հասարակ գիւրիւնցի հայ կին հնարել է մի մեքենայ, որի վրա կարելի է բոլոր եւրոպական կերպասների ամենաճիշդ նկարը, գործուածը, ձևը ու գոյները ընդօրինակելը բրդեայ ամենաալնիւ մանուածով։ Հնարագէտ հայ կնոջ գիւտը այնպիսի դիւթական ազդեցութիւն է ունեցել բոլոր շրջակայ մօտ թէ հեռու քաղաքների վրա, ինչպէս են Մալաթիա, Սեբաստիա, Եօզղադ, Մարաշ, Կեսարիայ և այլն, որ բոլոր այդ քաղաքներից հայ և թիւրք սկսել են խումբ խումբ հաւաքվել Գիւրիւն հայ կնոջ հրաշագործ մեքենայի արդիւնքով ապրուստ գտնելու համար։ Գիւրիւնցի հայ բեռնակիրները Եգիպտոս, Զմիւռնիա, Կ. Պոլիս և Ռումելիա, լսելով իրանց քաղաքի ուրախալից լուրը, շտապել են բոլորն էլ յետ դառնալ իրանց կանանց օգնելու ու ծառայելու համար։ Այսպիսով եօթը ամսուայ մէջ Գիւրիւնում խմբվել է բազմաթիւ զուտ հայ բնակութիւն, և մի քանի հայախօս և հայ կանանց մօտ գործաւորութիւն անող թիւրք և քիւրդ ընտանիք։

Իրանց արանց ձեռքով ծախել տալով ապրանքները չորս կողմի քաղաքների մէջ, հայ կանայք ժողովել են այնչափ դրամագլուխ, որով ձեռնարկել են այժմ իրանց արդիւնահանութիւնը Հայաստանից դուրս սփռելուն ևս, վատնորոյ ընկերակցական բաժանորդութեամբ նոքա սկսել են բաւական մեծ քանակութեամբ ապրանք ուղարկել Կ. Պոլիս եւրոպական կերպասների հետ բացարձակ մրցում բռնելու համար։ Ահա հէնց այս մի քանի օրերս էր, որ Կ. Պոլիս ոտ դրաւ Հայաստանի խորքի առաջի մը չակված արդիւնահանութիւնը, որը նուրբ ու գիմացկան բրդեայ գործուածի կատարելագործութեամբ այնպիսի համբաւ ստացաւ մի երկու օրվայ մէջ ամբողջ Կ. Պոլսում, որ գիւրիւնցի մի հարուստ վաճառական՝ պ. Գէորգ Թօփալեան հարկադրված գտնվեցաւ Հայաստանի հազուագիւտ և հեռաբրքիր կերպասից ընծայ ներկայացնել սուլթանին։ Սուլթանի հաւանութիւնը այնչափ մեծ է եղել, որ ցանկացել է նմուշների ամեն տեսակներից մի մի ջուխտ հագուստ ունենալ, որ և ստացել է իսկոյն ներկայացնել նոյն պ. Թօփալեանը։ Լսելով այսպիսի մի անսպասելի բան, եւրոպական դեսպանները ևս չատ հետաքրքրվել են, բայց չը կարողանալով չատ բան ձեռք բերել, առել են ինչ կարողացել են մնացած տեսակներից։ Ասում են որ աստրխանի դեսպանը միայն կարողացաւ ամենքից չատ բան ձեռք բերել Վիեննա իր ընտանեաց ու ազգականներին ընծայ ուղարկելու համար ոչ ինչպէս մի չնչաշարհիկ բան, այլ ինչպէս խիստ ալնիւ, վայելուչ ու մանաւանդ գոյների մէջ դիմացկուն բրդեայ գործուած։

Զուգենալով զրկել ձեզ այդ մեզ համար թանգագին և հեռաբրքիր նմուշներից, ևս կարողացայ ձեռք բերել ձեզ ուղարկելու համար մօտ երեսուն մեծ և փոքր տեսակ նմուշներ, ևս մի հատ փոքրիկ շալ։ Բայց որովհետև Հայաստանի առաջի կատարելագործված արդիւնահանութիւնը անհրաժեշտ պարտաւորութիւն պիտի լինի խրախուսել իւրաքանչիւր հայի, մանաւանդ հայուհու համար, վատնորոյ այդ գործուածներից զգեստ կամ շրջազգեստ ունենալ ցանկացողները թող դիմեն նոյն իսկ պ. Գէորգ Թօփալեանին հետևեալ հասցէով. Constantinople, Kevorke Topalian, Astardji—Han № 14։ Շալերի մեծ տեսակների գործածութիւնը կարող է վնել մուսակների գրպանի երեսի, բաղմոցի, բազկաթոռի, գիշերվայ զգեստի, կանանց շրջազգեստի և ուրիշ տեսակ գործածութիւնների համար, իսկ միւս բրդեայ գործուածները, որոնց նմուշները ուղարկեցի ձեզ, ինչպէս կը տեսնէք, կարող են արանց հագուստ լինել այնչափ դիմացկուն, որչափ ոչ մի եւրոպական գործուած։ Խմանալով իրանց ձեռնարկութեան յաջողութիւնը հայուհիք տեղեկացրել են Գիւրիւնից թէ՝ իրանք պատրաստ են ամեն տեսակ գոյներով և նկարներով շինել գործուածները, եթէ միայն ցանկացողները ուղարկեն նոցա իրանց սիրած մետաքսեայ կամ բամբակեայ գործուածների եւրոպական նմուշները. ուրեմն ամեն տիկին ինչ ծաղիկներով և գոյներով հայկական ապրանքից բրդեայ ամենաալնիւ ամառվայ կամ ձմեռվայ հագուստ գտնկանայ ունենալ, թէ խնայողութեան և թէ իր քոյրերին խրախուսելու համար, թող ուղարկէ իր ուզած նմուշը վերոյիշեալ պարոնին և նորա ձեռքով ոչ աւելի ուշ քան երկու ամսվայ ընթացքում կը ստանայ Հայաստանի կենտրոնից հայուհու հնարած մեքենայից դուրս եկած հայկական ապրանք։ Նոյնը կարող են անել ի հարկէ և ազամարդիկ իրանց համար, անկասկած մխելով ոչ աւելի փող, քան թէ մխում են այդ տեղ իրանց վրացի հագուստի համար։ Այսպիսով կարելի կը լինէր մեծ բարոյական զարկ տալ Հայաստանի խորքում յայտնվող բուն ժողովրդական տաղանդին, խրախոյս ու բարի նախանձ զրգռելով Հայաստանի և ուրիշ քաղաքների հայուհիների մէջ, որոնք գուցէ ոչ պակաս ճարտարարուեստ կը գտնվէին աշխատութեան ուրիշ ճիւղերում ևս։

Ցեռնելով այս ամենը իրանց սեփական աչքով «Միացեալ ընկերութիւնը», ինչպէս և բոլոր միւս արանց և կանանց ընկերութիւնները դարձեալ ձեռք չեն վերցնում իրանց «լոյսից», որ պիտի սփռեն Հայաստանի մէջ «նորան բաղդաւոր անելու համար» զանազան տեսակ քերականական գիտելիքներով։ Երբ Հայաստանի նախնական պահանջների համար աւելի անհրաժեշտ ևս ցոյց տալիս նորա նիւթական և մտաւորական դրութեան բարւոքելը ու առաջարկում ևս գլխաւոր ուշադրութիւնը նուիրել դորան, ամենքն էլ պատասխանում են. «այո՛, ձեր ասածը լաւ է, սակայն մեր նպատակը լոյս սփռել է.» ով գարդ կանէր եթէ դոքա հասկանային հէնց մի քիչ թէ ինչի մէջ է կայանում մի ազգին լուսաւորող լոյսը՝ գարդակ ու ճոռոմաբան ճառեր գրելու թէ ժողովրդի վայելուչ նիւթական վիճակ ու փայլուն դրութիւն տալու մէջ։ Ուրիշ բան է եթէ ոան ազգին տիխնիկական զարգացում, որ կարող է ուղիղ նպատակին ծառայել, բայց ոչ թէ «լոյս» ասելով հասկանան իրանց չը մարսած ֆրանսիական կլասիկականութեան լոյսը։ Բացի այդ, երբ «Միացեալ ընկերութիւնը» բոլոր ընկերութիւններից քիչ թէ չատ զօրաւորագոյնն է թէ նիւթաւորապէս և թէ բարոյապէս, ինչպէս կարելի է, որ հէնց այդ ամենից զօրեղ ընկերութեան նպատակը ուրիշ բան լինի, քան թէ այն, ինչ աւելի անհրաժեշտ է ազգի պահանջներին. և եթէ Հայաստանի առաջի և կարևոր պահանջը կայանում է նորա մէջ, որ արհեստները ու արուեստներ զարգացնելով արդելեն բեռնակրութեան սոսկալի գաղթականութեանը, ուրեմն ինչպէս կարելի է այստեղ «զատ նպատակի» վրա խօսել։ Ահա հէնց այսօր հրատարակվեց տեղիս հայ լրագրութեան մէջ Ներսէս պատրիարքի շրջաբերականը բոլոր գաւառական եպիսկոպոսներին՝ խստիւ արգելել բեռնակիրների գաղթականութեան Հայաստանից դուրս. բայց ինչպէս կարելի է սոված մարդին արգելել կամ համոզել «յանուն հայրենասիրութեան» չը գաղթել, այլ սոված մեռնել։ Ուրեմն երբ պատրիարքը ազգի ներկայի ու ապագայի հաստատութեան առաջի պայմանը գտնում է գաղթականութեան պատճառները խափանելու մէջ, ինչպէս կարելի է Միացեալ կամ միւս ընկերութիւններին «Լոյսի» ու զատ նպատակների վրա խօսել։ Բայց ո՛չ, սոցա ճաշակը այնչափ է փչացած վանական դաստիարակութեան ազդեցութեամբ և այնչափ սոսկոած տիրացուական գարդակաբանութեան, որ առանց առիթ ունենալու փքուն ճառեր ու հրաւէրներ գրելու «լոյսի», «տիեզերքի», «երկնքի» ու «աստղերի» վրա, սոցա օրերը չատ տխուր կանցնեն ու գործունէութիւնը մի նշանակութիւն չի ունենայ իրանց սեփական աչքում. սոցա հարկաւոր է միշտ առիթ ունենալ հռչակելու ու պարծենալու թէ՝ Հայաստանին տիրել էր մի դժոխային խաւար, իսկ երբ պօլսեցիք իրանց լոյսի ֆոկուսը դարձրին այն կողմը, Հայաստանը միանդամայն փրկվեց ու հացի տեղ սկսեց լոյսով կերակրվել... Սոքա չեն հասկանում գոնէ այն, որ մուսուլման տարրի վրա հայերը չեն կարող ուրիշ կերպ ազդել, քան թէ այնպէս, ինչպէս ազդում են այժմ լոյսի ու քերականական գիտելիքների անունն էլ չիմացող գիւրիւնցի կանայք, այսինքն, ոչ վերացական զարգացմամբ, այլ գրական կուլտուրայով՝ արհեստով և արուեստով, որի վրա այսչափ տարի խօսում է ռուսահայ մամուլը, բայց սոքա մի ցորենի չափ անգամ չեն ըմբռնած։

Ցեռնելով այս ամենը մեզ, ռուսահայերիս, մնում է միայն ամեն կերպով համոզել այստեղի ընկերութիւնները, որ հրաժարվեն վերջապէս իրանց գործունէութեան վերացական պրոգրամմայից, այլ լուրջ կերպով իրանց ուշադրութիւնը դարձնեն Հայաստանի կենսական խնդիրների վրա, ուսումնասիրեն նորան օրինաւոր կերպով, մասնագիտաբար. յայտնեն իրանց մըշակած պրոգրամը ռուսահայերին. լսեն նոցա մամուլի քննութիւնները, ստէպ ստէպ ճիշդ ու կատարեալ հաշիւ տան իրանց գործունէութեան վրա ու աշխատեն այդպիսով ծառայել այն մեծ նպատակին, որի վրա դարձնում է այսօր Ներսէս պատրիարքի շրջաբերականը ընդհանուր ազգի ուշադրութիւնը։ Ահա այսպիսով միայն կարող է գործը առաջ գնալ և հասնել մեզ գուցէ աւելի արդիւնաւատ նպատակի, քան թէ 61 յօդուածի տարիներով քաշքրտիլը և ուրիշներից փրկութիւն ու երկնքից մանանայ սպասելը... Հարկաւոր է վերջապէս ցոյց տալ տաճկահայերին, որ քաղաքական լուրերով իրանց և մեզ կերակրելը պատիւ չէ բերում երկու կողմի ինտելիգենցիայի զարգացման ու ինքնաճանաչութեան, վատնորոյ ժամանակ է վերջապէս թողնել քաղաքական արտաքին լուրերը ու զբաղվել մեր ամենամեծ վէրքերին դարման տանելու գործով, այն էլ ոչ այն երևակայական ընթացքով որին հետևում են սոքա, այլ ըստ էութեան, մասնագիտաբար և քաղաքական էկոնոմիայի վրա հիմնվելով։ Ահա այս է հայի արքայութեան ուղիղ ճանապարհը։

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 ապրիլի։ Կիևվից Դրենտելն հեռագրում է „Правит. Вѣст.“ լրագրին, որ Ֆաստովօ և Ժմերինկ կայարանների մէջ կարգը վերականգնած է։ Վասիլկով քաղաքի ապզաբնակութիւնը յարձակվեցաւ հրէաների վրա։ Այնտեղ զօրքեր են ուղարկված։ Նոյնանման անկարգութիւններ պատահեցան Կոնօտոպի մէջ Անանիեվսկի գաւառում։ Կրասնոյարսկի հրդեհից վնասվածները ժամանակաւորապէս բնակեցրած են և նրանց ուտելիքը ապահոված է։ Այրվել են մօտ 330 տներ։ Այրված անշարժ կայքերի գինը հասնում է 500,000 ր.։ Շարժական կայքի մի մասը ապահոված էր 1,500,000 ր.։ Ընդհանուր վնասը հաշուում են հինգից մինչև ութ միլիոն։

ՍՕՖԻԱ, 29 ապրիլի։ Երէկ իշխանի պալատի առաջ ցոյցեր եղան։ Ժողովուրդը թնդեցնում էր օդը ոգևորված աղաղակներով ի պատիւ իշխանի, որ երեք անգամ դուրս եկաւ ժողովրդին շնորհակալութիւն յայտնելու համար։ Միտրօպոլիտը խնդրեց իշխանին յետ վերցնել իր հրաժարականը գահից և չը թողնել Բուլգարիա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 ապրիլի։ „Порядокъ“ լրագիրը հաղորդում է. „Մի քանի օր առաջ պոլիցիային աջողվեցաւ գտնել հեռքեր մի չափազանց նշանաւոր յանցաւորի, որ մահուան պատժի ենթարկված յանցաւորների գլխաւոր գործակիցներից մէն էր։ Ցիշեալ անձնաւորութեան վրա հինգ օր շարունակ քայլ առ քայլ հսկում էին։ Երբ հաւաքված մեղադրող հանգամանքները այլ ևս տեղիք չէին տալիս կասկածել նրա մեղաւորութեան մասին և յանցաւորը կարող էր նկատել, թէ իր վրա հսկում են և այդ հանգամանքը կարող էր դժուարացնել նրան կալանաւորելը, քաղաքապետը հրամայեց նրան կալանաւորել։ Երէկ առաւօտեան չորս ժամին այդ հրամանը կատարվեցաւ։ Յանցաւորը մօտաւորապէս 29 տարեկան է։ Հաւաքված տեղեկութիւնների համեմատ նա գլխաւոր մասնակցողն էր Սաղովայա փողո-

ցի վրա ական փորելու գործին։ Նրա բնակարանը ներկայացաւ քաղաքապետի կարգադրութեան տակ եղած օֆիցերը մի քանի պոլիցիականների և զինուորների ուղեկցութեամբ։ Փնից զարթեցրած լինելով, նա պոլիցիայի այցելութեան պատճառը և պատահածը, ըստ երևոյթին անկարող էր բացատրել։ Այնտեղ եկած օֆիցերի յայտնութեանը, թէ նա եկել է խուզարկութիւն անելու համար, նա պատասխանեց՝ խուզարկութեան համար անհրաժեշտ է ծառայողի ներկայութիւնը։ Երբ նրան ասացին, թէ ծառայողը նրա առաջն է, նա նկատեց, որ անհրաժեշտ է մի պատգամաւոր իր պաշտօնի բաժնից։ Ցանցաւորի բնակարանում կենում էր նրա քոյրը անչափահաս երեխայի հետ, որոնք նոյնպէս կալանաւորված են։ Կալանաւորվածի անձնաւորութիւնը վկայած է։ Մարտի 1-ի յանցաւորների մահուան պատիժը կատարելու ժամանակ նրան տեսան կախաղանի մօտ, այն տեղի վրա, որտեղ ոչ ոքի չէին թողնում բացի դատարանի աստիճանաւորներից, քաղաքապետի իշխանութեան տակ եղած օֆիցերներից և լրագիրների թղթակիցներից։" Այսօր Մարսօվօ դաշտի վրա թագաւորի և թագուհու ներկայութեամբ կատարվեցաւ մայիսեան զօրախաղը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՑՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչև այժմ չեղած ԱԿԱՆՋԻ ԻՒՂ, ՐԺԻՇԿ ՀԱՄԻԴՅԻ, որ կատարելագործված է բժիշկ ՄԱՎՐՈԿԻՒ ԴԻՑԶԻՑ։ Առողջացնում է ամեն տեսակ ԽՈՒԼՈՒԹԻՒՆ, եթէ նա բնական չէ։ ԵՐԵՔ ՌՈՒԲԼ բանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՀԻՂ այդ իւղից, մանրամասն ԽՐԱՏՆԵՐՈՎ գործածութեան մասին։ Այդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ և Ալեքսանդր ՎԱՆՑԵԼ Ց, Կազանսկայա փողոց № 3։ 50—52

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. ԿՕՆԳՕ-ԹԷՅ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի ԿԱՅՍԱՈՒ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՅ 2 ր. առանց թղթի։ Անգլիական ըէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ, Զօնսօնի ԿՈՂՊԷՔՆԵՐԸ, Տուրնօրի ԳՐԻԶՆԵՐԸ և էկստրակա կակաօ-ը, շօկոլադ-Ֆրայի 1 ր. 20կ. անգլ. ֆունտը և թէյ առանց թղթի 1 ր. 60 կ. ֆունտը, ամենալաւը Մոսկվայց 2 ր. 20 կ. թղթով։ ՄԻԵԻՆՈՅՆ ՏԵՂԸ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ մահճակալներ, մատուցարաններ, կողպէքներ, դանակներ, գդալներ, գրիչներ, թուղթ, կլէօնկա, ձիաստանոր, վրձին, ամաններ, բաժակներ, մուրաբաներ և այլն 30% աւելի էժան, քան թէ ուրիշ խանութներում։ 15—15

Ռուսիոյ Ամերիքայի տուէտական մագազինում, ծախվում է, Աւստրիայի ըիսկի գերանդիք (կօսաներ) հարիւր հատն 55 ռուբլիով։ Դվորցովայա փողոց գալերէյ Արծրունի։ 5—10

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում հետևեալ գրքերը։

1. Հայը և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դասախօսութիւն ընթերցուած Թիֆլիսի ժողովարանում մայիսի 17-ին 1879 թ. Աբգար Յովհաննէսեանի. թ. 1881 թ. գ. 30 կոպ.

2. Մատաւոր ֆիզիքական և բարոյական ինքնակրթութեան մասին, խորհուրդներ այն երիտասարդներին, որոնք կեանքի ասպարէզը մտնում և ցանկանում են կանոնաւորապէս պատրաստուել ուսումնական և հասարակական գործունէութեան համար. հեղ. Զօն Սթիւարտ Բլեկկիի, թարգ. Գր. Շահբուդաղեանց Տ. 1881 թ. գ. 60 կ.

3. Հենչէլի. Բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ ծխական դպրոցների համար փոխադրեց Ս. Մանդինեանց 1-ն և 2-դ տարի, թ. 1881 թ. գ. 40 կ.

4. Քնար ժողովրդական երգեր հեղ. Խաչ. Տէր-Խաչատրեանց, Երևան 1880 թ. գ. 45 կ.

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ գրքերը։

5. Մարկոս Աւրելիոս կայսեր իմաստասիրական և խրատական թղթերը, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

6. Բիբլիոլա. Պատմական վիպասանութիւն Ք. Վ. Սէնդին Գաղղիացւոյ Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

7. Մագաղին է վիպասանութիւն Պ. Յուլիոսի Սանոյ. անդամ Գաղիոյ ճեմարանին, Վենետիկ գ. 1 ր.

8. Սող. Կեսների քերթուած ի մահն Աբելի թարգ. Հ. Մանուէլի Վ. Զախջախեան Վենետիկ գ. 1 ր. 75 կ.

9. Ֆենելոնի Արկածք Տելեմաքայ, թարգ. Եղուարդայ Վ. Հուրմիւզեան Աբբեպ. Շիրակայ Վենետիկ գ. 3 ր. 50 կ.

10. Առակք Եզոփոսի, թարգ. ի գաղղիական լեզուէ Հ. Մինաս Վ. Բժշկեան Վենետիկ գ. 2 ր. 50 կ.

11. Յուլիոսի Կեսարու յիշատարանք գաղղիական պատերազմին, թարգ. Հ. Աբսենի. Կ. Բագրատունեոյ Վենետիկ գ. 1 ր. 75 կ.

12. Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց հայոց համար Հ. Մանուէլ Վ. Քաջունի Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր ռուբլուն 10 կ. առանց փողի պատուէրները չեն կատարվում։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հանձնատեցէք թէյի ֆունտը			1 ր. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ				ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	—	ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	—	ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	—	ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	—	ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	—	ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	—	ֆ. 3 ր.

76—100

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պանդոկներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շօկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամանների, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թմբաքեր, դուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէյ ուրիշ տեղ։ Արծրունու գալերէում։ 100—91

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ծրծիլ մեքենաներ 1 ր., ԲԱԺԱԿՆԵՐ 12 կ., ՋՐԱՄԱՆՆԵՐ 50 կ., հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ 5 կ. մինչև 5 ր., ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5—50 ր., ժիլեաներ 75 կ., վարտիկներ 4 ր., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ր. տղամարդկերանց 14 ր., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 ռուբլ, մակինտոշներ 6 ր., հին պօրավէյն և խերես 1 ր. 20 կ. շիշը, կօնիակ առաջին տեսակի 1 ր. 75 կ., ՊԼԿՈՒԼԻ 50 կ., թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅ 1 ր. 40 կ. առանց թղթի։ Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ԱԼԲՈՄՆԵՐ շատ էժան։ 6—15

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ
„ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱԶԸ"
անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 գեղ. լոյս չը տեսած բանաստեղծութիւններ։

Օտարաքաղաքացիք կանխիկ մէկ ռուբլ ուղարկելով, դիմում են ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով.

«Чрезъ Просковейское Почтовое отдѣленіе въ городъ Святаго-Креста (Ставрапольс. губ.). Учителю Семену Сафаріанцу.»

Արդէն վաճառվում է
ԻՆՉ ԲԱՆ Է
ԺԱՆՏԱԽՏԸ
Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից։ Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկայ։
Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց
Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զիջում կը լինի։ Մեր հասցէն՝ Въ Эривань А. Гуламирянцу

ՄԻՆՉԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐՔԵՐԸ։

1) Երկու մանրավէպ՝ Ալֆօնս Դօդէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
2). Պօղոսնու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան։ . . . . . 20 կ.
3). Պապ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Ն. Տ. Աւետիքեան։ 25 կ.
4). Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Ա. ցախեցի . . . . . 30 կ.
5). Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի։ . . . . . 15 կ.
6). Քնար խօսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան։ . . . 50 կ.

Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ։ Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի „Քնար խօսնակից" որի համար առանձին կարելի է ստորագրել և մնացեալ հինգը առանձին։

Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան։

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Апрѣля 1881 года. Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.